

**SMS Վիկտորինայի
Հատուկ Դրույթներ և Պայմաններ
(այսուհետ՝ Հատուկ Պայմաններ)**

**Special Terms and Conditions
of the SMS Quiz
(hereinafter the “Special Conditions”)**

SMS Վիկտորինա (այսուհետ՝ **SMS Վիկտորինա**) **SMS quiz** (hereinafter the “SMS Quiz”)

1. Ընդհանուր Դրույթներ

1.1. SMS Վիկտորինան անցկացվելու է ՀՀ-ում, ս.թ. փետրվարի 16-ից ժամը 12:00:00-ից մինչև ս.թ. փետրվարի 25-ը ժամը 23:59:59 և բաղկացած է 1 փուլից:

1.2. SMS Վիկտորինայի հաղթող մասնակիցը կստանա եռօրյա հանգիստ 2 անձի համար «Ապագա Ռեզորթում», ինչպես նաև «Յելլ Էքսթրիմ Պարկի» ամբողջական փաթեթից օգտվելու հնարավորություն (**Մրցանակ**):

1.3. SMS Վիկտորինային կարող է մասնակցել ցանկացած ֆիզիկական անձ, (այսուհետ՝ **Մասնակից**)`

- ում 18 տարին լրացել է,
- ով չի հանդիսանում Յուբոմ ՓԲԸ-ի (այսուհետ՝ **Յուբոմ**) կամ Նիկիտա Մոբայլ ՍՊԸ-ի (այսուհետ՝ **Պրովայդեր**) կամ Յուբոմի հետ բացառիկ Գործակալության և Դիստրիբյուցիայի պայմանագրով գործող գործակալի և/կամ դիստրիբյուտորի աշխատող կամ այլ անձ, ով ուղղակի կամ անուղղակի առնչություն ունի SMS Վիկտորինայի կազմակերպման և/կամ անցկացման հետ և/կամ հանդիսանում է վերոնշյալ անձանց ընտանիքի անդամ (մայր/հայր, հարազատ քույր/եղբայր, ամուսին/կին, երեխա),
- ով օգտվում է Յուբոմի շաբաթական հեռախոսակապի ծառայություններից:

1.4. Յուբոմն իրավունք ունի մերժել սույն Հատուկ Պայմանների դրույթներն ու պայմանները չպահպանող և/կամ

1. General Provisions

1.1. The SMS Quiz will be conducted in the Republic of Armenia, from 16/02/2018 12:00:00 to 25/02/2018 23:59:59 in 1 phase.

1.2. The winner of the SMS Quiz will get a 3-day vacation for 2 persons in “Apage Resort” and possibility to enjoy full package of “Yell Extreme Park” activities (**Prize**).

1.3. The SMS Quiz is open to any individual (hereinafter the “**Participant**”), who:

- is over the age of 18,
- is not an employee of Ucom CJSC (hereinafter “**Ucom**”) or of Nikita Mobile LLC (hereinafter the “**Provider**”) or of Ucom agents and/or distributors, acting under an exclusive Agency and Distributorship Agreement, or any other person, who is directly or indirectly connected with organization and/or conduction of the SMS Quiz, and/or a family member of above persons (mother/father, sister/brother, husband/wife, children),
- is a subscriber of Ucom mobile voice services.

1.4. Ucom shall have the right to reject the participation in the SMS Quiz of a person or refuse to award the person, who fails to comply

չբավարարող անձի մասնակցությունը SMS Վիկտորինային կամ հրաժարվել Մրցանակ շնորհել այդպիսի անձի:

1.5. Մասնակիցը կարող է մասնակցել SMS Վիկտորինային և ստանալ SMS Վիկտորինայով սահմանված Մրցանակը՝ պայմանով, որ սույն Հատուկ Պայմաններում սահմանված բոլոր դրույթները և պայմանները կատարվել և պահպանվել են նրա կողմից:

2. SMS Վիկտորինայի կանոններ

2.1. SMS Վիկտորինային մասնակցելու համար Մասնակիցը՝

- «1049» կարճ համարին ուղարկում է SMS՝ տեքստում նշելով «Play» բառը.
- որպես պատասխան ստանում է SMS, որը պարունակում է առաջին հարցը՝ պատասխանի երեք հնարավոր տարբերակներով.
- պետք է պատասխանի հարցին՝ ուղարկելով SMS 1049 կարճ համարին՝ տեքստում նշելով այն պատասխանի համարը, որն իր կարծիքով հանդիսանում է ճիշտը.

(օրինակ՝

Ո՞վ է աշխարհի առաջին կին տիեզերագնացը:

1. Սամանտա Քրիստոֆորետտի
2. Վալենտինա Տերեշկովա
3. Սալլի Կրիստեն Ռայդ

Եթե Մասնակիցը կարծում է, որ առաջին կին տիեզերագնացը Վալենտինա Տերեշկովան է, ապա նա 1049 կարճ համարին ուղարկում է SMS՝ տեքստում նշելով 2 թիվը):

- Անկախ պատասխանի ճիշտ կամ սխալ լինելուց՝ Մասնակիցը ստանում է հաջորդ SMS-ը, որտեղ նշվում է նախորդ հարցի պատասխանի արդյունքը (ճիշտ կամ սխալ), կուտակված միավորների քանակը և հաջորդ հարցը:
- Վերջին հարցին պատասխանելուց հետո

with and/or meet the terms and conditions defined in the present Special Conditions.

1.5. The Participant can take part in the SMS Quiz and be eligible for the Prize defined for the SMS Quiz, provided that he/she complies with and meets all the terms and conditions defined in the present Special Conditions.

2. SMS Quiz Rules

2.1. To participate in the SMS Quiz the Participant should:

- send SMS with the keyword “Play” in the body text to 1049 short number,
- receive SMS in response, containing the first question with 3 possible answer choices,
- should answer the question, by sending SMS with the number of the answer, which he/she believes is the correct one, to 1049 short number,

(For example,

Who is the first woman cosmonaut?

1. Samantha Cristoforetti
2. Valentina Tereshkova
3. Sally Kristen Ride

If the Participant believes that the first woman cosmonaut is Valentina Tereshkova, he/she will send SMS with the number 2 in the body text to 1049 short number).

- Whether the answer is correct or wrong, the Participant will receive the next SMS, containing the result of the answer to the previous question (correct or wrong), the number of the collected points and the next question.
- After answering the last question, the

Մասնակիցը ստանում է SMS, որտեղ նշվում է վերջին հարցի պատասխանի արդյունքը (ճիշտ կամ սխալ) և վաստակած ընդհանուր միավորների քանակը:

Participant will receive SMS, containing the result of the last answer (correct or wrong) and the total number of the collected points.

2.2. Մասնակիցը չի ստանա նոր հարց առանց պատասխանելու նախորդ հարցին:

2.2. The Participant will not receive a new question, unless he/she answers the previous one.

2.3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար Մասնակիցը ստանում է 1 միավոր, յուրաքանչյուր սխալ պատասխանի համար՝ 0 միավոր:

2.3. For each correct answer the Participant will receive 1 point and for each wrong answer – 0 point.

2.4. Բոլոր Մասնակիցները SMS Վիկտորինային մասնակցելու սկզբին ունեն 0 միավոր:

2.4. At the beginning of the SMS Quiz all the Participants have 0 point.

2.5. Յուրաքանչյուր Մասնակցի համար հարցերը ընտրվում են պատահականության սկզբունքով՝ հարցերի ընդհանուր ցանկից: Յուրաքանչյուր հարցի համար առկա է 3 հնարավոր պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ:

2.5. The questions for each Participant are selected at random, from the general list of questions. For each question 3 possible answers are available out of which only one is correct.

2.6. 1049 համարին ուղարկվող մեկ SMS-ի արժեքն է 150 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Բոլոր SMS-ները (առաջին SMS-ը, որն ուղարկվում է SMS Վիկտորինային ակտիվացնելու համար, հարցերի պատասխանները և այլն) վճարովի են: Վճարումն SMS-ների համար իրականացվում է Յուքոմի և բաժանորդի միջև կնքված բաժանորդային պայմանագրի պայմաններին համաձայն, ներառյալ, եթե Մասնակիցը չի հանդիսանում SMS Վիկտորինային մասնակցության ընթացքում օգտագործվող հեռախոսահամարի բաժանորդ:

2.6. The price per SMS sent to 1049 short number is 150 AMD, including VAT. All SMSs (the first SMS sent to activate the SMS Quiz, answers to the questions, etc.) are chargeable. SMSs will be charged in accordance with the terms defined in the subscription agreement concluded between Ucom and the subscriber, including, if the Participant is not a subscriber of the number used for participation in the SMS Quiz.

2.7. Բաժանորդը հանդիսանում է SMS Վիկտորինայի ընթացքում հեռախոսահամարը և SIM Գարտը օգտագործելու համար միակ պատասխանատուն:

2.7. The subscriber is the sole responsible for the use of the number and SIM Card during the SMS Quiz.

2.8. SMS Վիկտորինային անց է կացվում հայերեն լեզվով (լատինատառ):

2.8. SMS Quiz will take place in Armenian (in Latin transliteration).

2.9. Մեկ բջջային հեռախոսահամարը կարող է մասնակցել SMS Վիկտորինային միայն մեկ անգամ:

2.9. Each mobile number can participate in the SMS Quiz only once.

3. Արդյունքներ և Մրցանակներ

3.1. Վիկտորինայի հաղթող է ճանաչվում Վիկտորինայի այն Մասնակիցը, որը ճիշտ է պատասխանել հարցերի առավելագույն քանակին վիկտորինայի ավարտին, այսինքն նա, ով առավելագույն միավորներ է հավաքել ա.թ. փետրվարի 16-ի ժամը 12:00:00-ից մինչև փետրվարի 25-ի ժամը 23:59:59 ընթացքում:

3.2. Հաղթող կարող է լինել ցանկացած Մասնակից, ով բավարարում է սույն Հատուկ Պայմաններում սահմանված պայմանները:

3.3. SMS Վիկտորինայի արդյունքների հաշվարկը և հաղթող հեռախոսահամարի որոշումն իրականացվում է անկախ ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովի մասնակցությամբ:

3.4. SMS Վիկտորինայի արդյունքները հրապարակվելու են Յուքոմի պաշտոնական վեբ-կայքում (<http://www.ucom.am>)՝ ամենաուշը ա.թ. մարտի 2-ին: Մասնակիցներն ընդունում են, որ իրենց անունները կամ հեռախոսահամարները կարող են հրապարակվել Յուքոմի վեբ-կայքում, իրենց՝ որպես հաղթող կամ հավանական հաղթող ճանաչվելու դեպքում:

3.5. SMS Վիկտորինայի արդյունքների հաշվարկման հիմք է հանդիսանում Մասնակցի կողմից SMS Վիկտորինայի՝ սկզբից մինչև ավարտ վաստակած միավորների ընդհանուր քանակը:

3.6. Այն դեպքում, երբ կան հավասար միավորներ ունեցող Մասնակիցներ, հաղթող է ճանաչվում այն անձը, ով հավաքել է առավելագույն/հաղթող միավորները ավելի վաղ (SMS-ը սերվերի վրա ստանալու վերաբերյալ համակարգում գրանցված ժամանակ):

3.7. Հաղթող է ճանաչվում այն անձը, ով բավարարում է սույն Հատուկ Պայմանները և ով ներկայացնում է SIM քարտը, որին կցված

3. Results and Prizes

3.1. The winner of the Quiz will be the Participant, who has answered correctly the maximum number of questions at the end of the Quiz, i.e., who has collected the maximum number of points from 16/02/2018 12:00:00 to 25/02/2018 23:59:59.

3.2. A winner may be any Participant, who meets the conditions defined in the present Special Conditions.

3.3. The results of the SMS Quiz are calculated and the winning number is determined with participation of a committee consisting of independent representatives.

3.4. The results of the SMS Quiz will be posted on Ucom official website (<http://www.ucom.am>) on 02/03/2018 at the latest. The Participants acknowledge that their names and phone numbers can be posted on Ucom website, if they are selected as a winner or possible winner.

3.5. As a basis for calculation of the results of the SMS Quiz is considered the total number of points collected by the Participant during the whole period of the SMS Quiz, i.e., from beginning to end, as follows:

3.6. In case of Participants having equal points, the winner will be the one, who has collected the maximum/winning points earlier (at the time recorded in the system when the SMS was received on the server).

3.7. The winner will be the person, who meets the present Special Conditions and who presents the SIM Card to which the winning

է հաղթող Ucom շարժական ցանցի հեռախոսահամարը (անկախ այն հանգամանքից, թե ով է հանդիսանում հեռախոսահամարի բաժանորդը), և որի միջոցով մատուցվող շարժական հեռախոսակապի ծառայությունները, SMS վիկտորինայի ողջ ընթացքում և Մրցանակը տրամադրելու պահին, գտնվում են ակտիվ շրջանում:

3.8. SMS Վիկտորինայի հաղթողը ստանալու է Մրցանակ՝ եռօրյա հանգիստ 2 անձի համար «Ապագա Ռեզորթում», ինչպես նաև «Յելլ Էքսթրիմ Պարկի» ամբողջական փաթեթից օգտվելու հնարավորություն: Մրցանակի մանրամասների մասին հաղթողին լրացուցիչ կտեղեկացվի:

3.9. Նախքան հաղթողին Մրցանակը տրամադրելն Յուքոմը ստուգում է նրա ինքնությունը՝ անձնագրի բնօրինակի հիման վրա: SIM քարտը և պահաջվող փաստաթղթերն Յուքոմին չներկայացվելու դեպքում կամ սույն Հատուկ Պայմաններին անհամապատասխանության հայտնաբերման դեպքում Յուքոմն իրավունք ունի մերժել Մրցանակի տրամադրումը և տնօրինել այն իր բացառիկ հայեցողությամբ:

3.10. Հաղթողին որոշելուց հետո ամենաուշը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես սահմանված է սույն Հատուկ Պայմաններում, Յուքոմը տեղեկացնում է հաղթողին իր հաղթանակի մասին՝ զանգահարելով այն հեռախոսահամարով, որից ուղարկվել են SMS Վիկտորինային մասնակցելու SMS-ները: Այն դեպքում, երբ հաղթողն անհասանելի է ինչ-ինչ պատճառներով (ռադիոձածկույթից դուրս է, հեռախոսը անջատված է և այլն), համապատասխան SMS հաղորդագրություն է ուղարկվում հաղթողի նույն հեռախոսահամարին՝ նշելով, որ նա ճանաչվել է SMS Վիկտորինայի հաղթող և Յուքոմի հետ կապ հաստատելու խնդրանքով: SMS հաղորդագրությունն Յուքոմի կողմից ուղարկելու պահից

Ucom number is assigned (regardless of who the subscriber of the number is) and the mobile voice services provided by which are active during the whole period of the SMS Quiz and upon award of the Prize.

3.8. The winner of the SMS Quiz will be awarded a Prize of 3-day vacation for 2 persons in “Apaga Resort” and possibility to enjoy full package of “Yell Extreme Park” activities. The winner will be notified of the Prize details additionally.

3.9. Before awarding the Prize, Ucom will check the identity of the winner based on his/her original passport. Unless the SIM Card or the required documents are presented to Ucom or any non-conformity with the present Special Conditions is detected, Ucom will have the right to refuse to award the Prize and dispose of the Prize at its sole discretion.

3.10. Within 5 (five) working days following the selection of the winner, as is defined in the present Special Conditions, Ucom shall notify the winner of his/her victory by calling the number from which the SMSs for participation in the SMS Quiz were sent. Unless the winner is reached for any reasons (is out of coverage, phone is switched off, etc.), a respective SMS will be sent to the same number of the Participant, notifying of his/her victory and with a request to contact Ucom. Upon sending of the SMS by Ucom, the Participant will be considered to be notified of his/her victory. Unless the winner contacts Ucom in order to be confirmed as a winner by 02/03/2018 18:00, the Participant will be deemed to have rejected the Prize and Ucom will be entitled to refuse to award the Prize to that person. In this case the next Participant with

Մասնակից-հաղթողը համարվում է ծանուցված իր հաղթանակի մասին: Եթե Մասնակիցը կապ չի հաստատում Յուքումի հետ՝ որպես հաղթող հաստատվելու համար, մինչև ս.թ. մարտի 2-ի ժամը 18:00-ն, ապա համարվում է, որ Մասնակից-հաղթողը հրաժարվել է մրցանակից և Յուքումն իրավունք ունի մերժել մրցանակի շնորհումը այդ անձին: Այս դեպքում հաջորդ առավելագույն միավորներ վաստակած Մասնակիցը կճանաչվի որպես հաղթող: Մրցանակը կշնորհվի միայն այն հաղթողին, ով կհաստատվի որպես այդպիսին:

3.11. Այն դեպքում, երբ Մասնակից-հաղթողը հրաժարվում է Մրցանակից, հաջորդ առավելագույն միավորներ հավաքած Մասնակիցը կճանաչվի որպես հաղթող:

3.12. Մրցանակը շնորհվում է Յուքումի կողմից սահմանված պայմաններին համաձայն, որոնց մասին հաղթողին լրացուցիչ կհայտնվի: Յուքումի կողմից Մրցանակը շնորհելու իր պարտականությունը համարվում է պատշաճ կատարված Հատուկ Պայմաններով սահմանված կարգով Մրցանակը հաղթողին փոխանցելու պահից:

3.13. Մրցանակը հաղթողի պահանջով ենթակա չէ դրամական փոխհատուցման՝ ամբողջությամբ կամ մասամբ, կամ փոխարինման այլ մրցանակով:

3.14. Յուքումն իրավասու է փոխարինել հայտարարված Մրցանակը իր հատկանիշներով և գնով համարժեք մրցանակի հետ:

3.15. Սույն Հատուկ Պայմանների խախտում բացահայտելու դեպքում Յուքումն իրավունք ունի հաղթող ճանաչված անձին զրկել հաղթողի կարգավիճակից ու իրավունքներից և տնօրինել Մրցանակն իր հայեցողությամբ:

3.16. Այն դեպքում, երբ Հատուկ Պայմաններով կամ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում և հիմքերով

the highest score will be selected as a winner. The Prize will be awarded only to the winner, who is confirmed as such.

3.11. In the event the winner rejects the Prize, the next Participant with the highest score will be selected as a winner.

3.12. The Prize will be awarded in accordance with the terms defined by Ucom, of which the winner will be notified additionally. Ucom will be considered to have fulfilled its obligation with regard to the award of the Prize properly upon delivering the Prize to the winner in a manner defined in the Special Conditions.

3.13. At request of the winner the Prize is not subject to monetary reimbursement, in whole or in part, or replacement with other prize.

3.14. Ucom is entitled to replace the announced Prize with a prize equivalent to the announced one with its features and price.

3.15. In the event violations of the present Special Conditions are found, Ucom will be entitled to deprive the winner of its status of a winner and rights and dispose of the Prize at its discretion.

3.16. Unless the Prize is awarded to the winner in the cases and on the bases defined in the Special Conditions or current legislation, Ucom

Մրցանակը չի շնորհվում հաղթող ճանաչված Մասնակցին, Յուքոմն իրավասու է տնօրինել Մրցանակն իր հայեցողությամբ, եթե այլ բան սահմանված չէ Հատուկ Պայմաններով:

4. Այլ պայմաններ

4.1. Մասնակցելով SMS Վիկտորինային՝ մասնակիցը հաստատում է, որ.

- իր 18 տարին լրացել է,
- ծանոթացել է SMS Վիկտորինայի անցկացման և դրան մասնակցության բոլոր կանոններին և ընթացակարգերին և համաձայն է դրանց հետ,
- համաձայն է, որ իր կողմից տրամադրված իրեն վերաբերող անձնական տեղեկությունները, ներառյալ, առանց սահմանափակման, անունը և ազգանունը, հասցեն, տարիքը և այլն և պատկերը և/կամ նկարներն օգտագործվեն գովազդային և այլ նմանատիպ նպատակներով, ներառյալ ՋԼՄ-ներով՝ առանց իր լրացուցիչ համաձայնության և առանց այդպիսի օգտագործման համար որևէ հավելյալ վճարում կատարելու պարտավորության, համաձայն է հարցազրույց տալ, ներառյալ գովազդային հարցազրույց, SMS Վիկտորինային իր մասնակցության վերաբերյալ՝ ներառյալ ռադիոյով և հեռուստատեսությամբ, ինչպես նաև զանգվածային այլ լրատվամիջոցներում, և/կամ նկարահանվել գովազդային կամ նմանատիպ այլ նպատակներով՝ առանց վարձատրության կամ փոխհատուցման: Նման պատկերների, նկարների, տեսաերիզների և հարցազրույցների նկատմամբ բոլոր մտավոր սեփականության իրավունքները

will be entitled to dispose of the Prize at its discretion, unless otherwise defined in the Special Conditions.

4. Miscellaneous

4.1. By participating in the SMS Quiz, the Participant confirms that he/she:

- is over the age of 18,
- has read and agrees to all the rules and regulations of conduction of and participation in the SMS Quiz,
- agrees to the use of his/her personal information provided by him/her, including, without limitation, his/her name and surname, address, age, etc. and his/her image and/or pictures for advertising and other similar purposes, including, via the mass media, without his/her additional agreement and without being paid any additional remuneration for any such use; agrees to give interview, including, advertisig interview, about his/her participation in the SMS Quiz, including on the radio and TV, as well as on other mass media, and/or be shooted for advertising or similar purposes, without any remuneration or compensation. All Intellectual Property Rights in such images, pictures, videotapes and interviews belong to Ucom or its partners.

պատկանում են Յուքումին կամ նրա գործընկերներին:

- համաձայն է լուսանկարվել և Յուքումին տրամադրել լուսանկարները, եթե պահանջվի, որոնք Յուքումն իրավասու է հրապարակել իր պաշտոնական կայքում, YouTube-ում և Facebook-ում Ucom-ի էջում,
- երբևէ չի ներգրավվել արտահանման վերահսկողության խախտման, հակակառավարական կամ ահաբեկչական գործողությունների կամ որևէ այլ անօրինական գործունեության մեջ:

4.2. Յուքումը պատասխանատվություն չի կրում Մասնակցի կամ երրորդ անձանց գործողությունների, ինչպես նաև իր վերահսկողությունից դուրս գտնվող այլ հանգամանքների հետևանքով SMS Վիկտորինայի վաղաժամկետ դադարեցման/ավարտման կամ SMS Վիկտորինայի անցկացման ժամկետների ձգձգման կամ այլ փոփոխությունների համար:

4.3. Յուքումն իրավունք ունի մերժել մրցանակի շնորհումը Մասնակց-հաղթողին, եթե SMS Վիկտորինան անցկացվել է անբարեխղճորեն կամ հայտնաբերվել են խարդախության դեպքեր կամ ծրագրային ապահովման/համակարգի ապօրինի մուտք գործելու դեպքեր կամ Յուքումին և/կամ SMS Վիկտորինայի այլ կազմակերպիչներին խաբելու այլ փորձեր: Սույն կետի հիման վրա SMS Վիկտորինային անձի մասնակցությունը դադարեցնելու կամ Մրցանակի շնորհումը մերժելու հիմք կարող է հանդիսանալ Յուքումի հիմնավոր կասկածը, և Յուքումը պարտավոր չէ Մասնակիցներին ապացուցել նման խարդախության կամ խաբեության առկայությունը:

4.4. SMS Վիկտորինան չի կարող համարվել վիճակահանություն կամ այլ խաղ, որը հիմնված է ռիսկի վրա:

- agrees to be photographed and provide the photos to Ucom, if required, which Ucom will be entitled to post on its official website, YouTube and on Ucom page on Facebook.

- has never been engaged in export control violations, subversive or terrorist activities or any other unlawful activities.

4.2 Ucom shall bear no responsibility for early termination/end or delay of or any changes to the SMS Quiz due to the actions of the Participant or third parties, as well as due to any other circumstances which are beyond its control.

4.3 Ucom shall have the right to refuse to award the Prize to the winner, if the SMS Quiz has been conducted in bad faith or cases of fraud or unauthorized access to the software/system or other attempts to deceive Ucom and/or other organizers of the SMS Quiz have been found. As per the present clause the justified doubt of Ucom may serve as a basis for stopping the participation of the person in the SMS Quiz or for refusing to award the Prize, and Ucom shall not be obliged to prove the Participants the existence of such fraud or act of deception.

4.4 The SMS Quiz cannot be considered as a draw or other game based on risk.

4.5. Յուրքումը չի կարող երաշխավորել, որ SMS Վիկտորինայում ընդգրկված բոլոր հարցերը և պատասխանները ճիշտ են, չեն պարունակում սխալ տվյալներ, հարցեր և պատասխաններ, դրա մեջ ներառված հարցերը չեն ենթադրում երկակի պատասխաններ և բոլոր այն տվյալները և պատասխանները, որոնք օգտագործվել և օգտագործվելու են այն մշակվելուց ստացվել են հավաստի աղբյուրներից:

4.6. Մասնակիցը սույնով համաձայնում և հաստատում է, որ SMS Վիկտորինային մասնակցելը կամ մասնակցության համար նախատեսված ընթացակարգը սկսելը համարվելու է իր կողմից սույն Հատուկ Պայմանների դրույթների ու պայմանների ընդունում:

4.5 Ucom cannot warrant that all the questions and answers included in the SMS Quiz are correct, do not contain incorrect data, questions and answers, that the questions included in the SMS Quiz do not imply ambiguous answers and that all the data and answers, which have been and will be used to develop the SMS Quiz have been received from reliable sources.

4.6 The Participant hereby agrees and confirms that the participation in or initiation of the anticipated procedure for participation in the SMS Quiz shall be deemed as acceptance by him/her of the terms and conditions defined in the present Special Conditions.